

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

29.12.2020թ. կնքված N ԱԳՆ-ԳՀԾՁԲ-20/02-2 «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան

20 հունվար 2020 թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ի դեմս գլխավոր քարտուղար Վահագն Մելիքյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գասպարյանի (այսուհետև՝ Կատարող), (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 29.12.2020թ. կնքված N ԱԳՆ-ԳՀԾՁԲ-20/02-2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1 Պայմանագրի N 2 հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի 1-ի:
- 1.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
- 2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
- 2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն. վարչություն
Հ/Հ 900011018414
ՀՎՀՀ՝ 02527728
Գլխ. քարտուղար
Վ. Մելիքյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Էլ. հասցեն՝ tender@garaj.am
հեռ. 055465456
Տնօրեն՝ Ա. Գասպարյան



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավեր ով նախա տեսվա ծ չափաբ աժնի համար ը 2	գնումների պլանով նախատեսվա ծ միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմ ան (CPV)	անվանումը	Ծառայության													
			Հողված	Դիմաց վճարումները նախատեսվում է ֆինանսավորել 2021 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին ըստ ամիսների՝												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամե նը Տարի
	50111170/505	Ավտոմեքեն աների պահպանմ ան ծառայությու ն	4252	130000	260000	390000	520000	650000	780000	910000	1040000	1170000	1300000	1430000	1560000	1560000
5	50111170/508	Ավտոմեքեն աների պահպանմ ան ծառայությու ն	4252	16000	32000	48000	64000	82000	98000	115000	130000	145000	160000	175000	195000	195000

* Վճարման ենթակա գումարները
 ներկայացված են անողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ արտաքին գործերի
 նախարարություն
 ք.Երևան,Վ. Սարգսյան 3
 ՀՀ ՖՆ աշխատակազմի
 գործառն. վարչություն
 Հ/Հ 900011018414
 ՀՎՀՀ՝ 02527728
 Գլխ. քարտուղար
 Վ.Մելիքյան

(ստորագրություն)
 Վ.Ս.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 «Ակրա Կրեդիտ Ագրիկոլ» ՓԲԸ
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829
 Էլ. հասցեն՝ tender@garaj.am
 հեռ. 055465456
 Տնօրեն՝ Ա. Գասպարյան



**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԳՆ-ԳՀԾՁԲ-20/02-2**

ք. Երևան

29 դեկտեմբեր 2020թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ. Մելիքյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գասպարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1755000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V = V_0 / (1 + X \cdot D)$, որտեղ՝

V-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

V₀-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

X-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

D-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

P-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²² Ընդ որում

տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 35 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ


ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան Վ.Սարգսյան 3

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն

ՀՎՀՀ 02527728


Հ/Հ900011018414

Գլխավոր քարտուղար
Վ.Մելիքյան



(ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ "1510012745550100»
ՀՎՀՀ 00873228

Էլ. հասցեն՝ tender@garaj.am
հեռ. 055465456

Տնօրեն՝ Ա. Գալստյան



(ստորագրություն)

Կ.Տ.

[Faint handwritten notes and signatures at the bottom of the page]

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**	
2	50111170/505	Ավտոմեքենաների պահպանման ծառայություն **** տեխնիկական բնութագիրը կցվում է	դրամ	1560000	1	Ք. Երևան. Վ. Սարգսյայն 3	Պայմանագիրն ուժ մեջ մտնելուց հետո մինչև 2021թ. դեկտեմբերի 20	
5	50111170/508	Ավտոմեքենաների պահպանման ծառայություն **** տեխնիկական բնութագիրը կցվում է	դրամ	195000	1	Ք. Երևան. Վ. Սարգսյայն 3	Պայմանագիրն ուժ մեջ մտնելուց հետո մինչև 2021թ. դեկտեմբերի 20	

NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղների և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների ²	
		Չափաբաժին 2 5 տեղ առցիկ տանող TOYOTA CORROLA, Toyota Camry , VW Jetta, VW Polo, VW Tiguan	Չափաբաժին 5 Ավտոբուս Hyundai H-1
		2	5
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում		
1	Բռնկման համակարգի ստուգում	5000	5000
2	Կցորդման համակարգի ստուգում	5000	5000
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	5000	5000
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	5000	5000
5	ABS համակարգի ստուգում	5000	5000
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5000	5000
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5000	5000
	Շարժիչ		
8	Շարժիչի հանում և տեղադրում	70,000	60,000
9	Շարժիչի վերանորոգում	250,000	250,000
10	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	60,000	60,000
11	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում	80,000	80,000

	միջադիրի փոխարինումով		
12	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	60,000	60,000
13	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	12,000	12,000
14	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	3,000	3,000
15	Շարժիչի փականների զապանակների փոխարինում	1,000	1,000
16	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	40,000	40,000
17	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	40,000	40,000
18	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	80,000	80,000
19	Ծնկածն լիսեռի հղկում	60,000	60,000
20	Ծնկածն լիսեռի փոխարինում	50,000	50,000
21	Ծնկածն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	20,000	20,000
22	Ծնկածն լիսեռի ատամնանիվի փոխարինում	15,000	15,000
23	Ծնկածն լիսեռի ուղղում	50,000	50,000
24	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	15,000	15,000
25	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	70,000	70,000
26	Շարժիչի բլուկի փոխարինում	180,000	180,000
27	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	40,000	40,000
28	Շարժիչի բլուկի հղկում	70,000	70,000
29	Մխոցի փոխարինում 1 հատ	90,000	90,000
30	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	250,000	250,000
31	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	30,000	30,000
32	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	15,000	15,000
33	Փոկանիվի փոխարինում	15,000	15,000
34	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում		
35	Շարժիչի շղթայի փոխարինում	60,000	60,000
36	Յուղի մղիչի շղթայի փոխարինում	20,000	20,000
37	Շարժիչի վանոսների փոխարինում	80,000	80,000
38	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	15,000	15,000
39	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	15,000	15,000
40	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	15,000	15,000
41	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	15,000	15,000
42	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	25,000	25,000
43	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	5,000	5,000
44	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	5,000	5,000
45	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում	5,000	5,000
46	Յուղի ծորակի փոխարինում	10,000	10,000
47	Օղաքաշակ փողրակի փոխարինում	5,000	5,000
48	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում	30,000	30,000
49	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
50	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	120,000	120,000
51	Ուղղորդիչ վռանների փոխարինում	5,000	5,000
52	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	35,000	35,000
53	Շարժիչի կափույրի փոխարինում	20,000	20,000
54	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	20,000	20,000
55	Մխոցամատի փոխարինում	5,000	5,000
56	Շարժիչի շարժաթևի փոխարինում	25,000	25,000
57	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	80,000	80,000

58	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	500	500
59	Ատամնանիվի փոխարինում	10,000	10,000
60	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	15,000	15,000
61	Սովաարիկ փոխարինում	10,000	10,000
62	Շարժիչի կալունի փոխարինում	10,000	10,000
63	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	25,000	25,000
64	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	20,000	20,000
65	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	15,000	15,000
66	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	50,000	35,000
67	Շարժիչի յուղի արանքաչափիչի (#ցտ) իրանի փոխարինում	20,000	20,000
68	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	25,000	25,000
69	Շարժիչի գամասեղի փոխարինում	3,500	3,500
70	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	19,000	19,000
71	Գլխիկի հեղուցսի փոխարինում	8,000	8,000
72	Ծնկաձև լիսեռի հեղուցսի փոխարինում	8,000	8,000
73	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	40,000	30,000
74	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	40,000	30,000
	3. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
75	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1,000	1,000
76	Ավտոմեքենայի յուղում	2,000	2,000
77	Համակարգչային ախտորոշում, թերուպյունների վերացմամբ	9,000	9,000
78	Յուղի ռադիատորի փոխարինում	20,000	20,000
79	Յուղի ռադիատորի նորոգում	20,000	20,000
80	Յուղի զտիչի փականի փոխարինում	5,000	5,000
81	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	40,000
82	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	40,000
83	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	40,000	40,000
84	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	40,000	40,000
85	Վառելիքի փողրակի փոխարինում	8,000	8,000
86	Վառոցքի մոմի փոխարինում	5,000	5,000
87	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	15,000	15,000
88	Օդի զտիչի փոխարինում	3,000	3,000
89	Կոնդիցիոների զտիչի փոխարինում	3,000	3,000
90	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
91	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	5,000	5,000
92	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	5,000	5,000
93	Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում	5,000	5,000
94	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	70,000	70,000
95	Ինժեկտորի բոցամուղի փոխարինում	10,000	10,000
96	Ինժեկտորի բոցամուղների մաքրում	15,000	15,000
97	Բոցամուղի կողավորում	20,000	20,000
98	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկների փոխարինում	12,000	12,000
99	Բենզամղիչի փոխարինում	15,000	15,000
100	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	6,000	6,000
101	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
102	Բռնկման կարգավորում	5,000	5,000
103	CO կարգավորում	5,000	5,000

104	Ղեկավարման բյուջի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
105	Ղեկավարման բյուջի վերանորոգում	40,000	40,000
106	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
107	Վառելիքի բաքի մաքրում	9,000	9,000
108	Արագարարի ոտնակի փոխարինում	5,000	5,000
109	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	5,000	5,000
110	Օդի ծախսի տվիչի փոխարինում	10,000	10,000
111	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	15,000	15,000
112	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	5,000	5,000
113	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի փոխարինում	5,000	5,000
114	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի մաքրում	5,000	5,000
115	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	12,000	12,000
116	Տվիչի փոխարինում	5,000	5,000
	4. Սառեցման և արտածման համակարգ		
117	Հովհարի փոխարինում	20,000	20,000
118	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000
119	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
120	Ռադիատորի շրջանակի փոխարինում	15,000	15,000
121	Շերտափեղկի փոխարինում	15,000	15,000
122	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	15,000	15,000
123	Ռադիատորի կալունակի փոխարինում	5,000	5,000
124	Ռադիատորի փողրակի փոխարինում	5,000	5,000
125	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	25,000
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
127	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	10,000	10,000
128	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	20,000	20,000
129	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	45,000	45,000
130	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	20,000	20,000
131	Ընդարձակող բաքի փոխարինում	10,000	10,000
132	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	5,000	5,000
133	Ջրի ծորակի փոխարինում	3,000	3,000
134	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	10,000	10,000
135	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	3,000	3,000
136	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
137	Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
138	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	65,000	65,000
139	Վառարանի ռադիատորի նորոգում	10,000	10,000
140	Վառարանի շարժիչի փոխարինում	20,000	20,000
141	Թերմոստատի փոխարինում	17,000	17,000
142	Ջրի մոդիչի փոխարինում միջադիրով	20,000	20,000
143	Գեներատորի փոկի փոխարինում	14,000	14,000
144	Գեներատորի փոկի ձգող հողովակի փոխարինում	12,000	12,000
145	Ջրի ռադիատորի վերանորոգում	55,000	55,000
146	Սառեցման համակարգի օդահանում	5,000	5,000
147	Խլարարի գոֆրայի փոխարինում	15,000	15,000
148	Կատալիզատորի հանում	25,000	25,000
149	Խլարարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	10,000	10,000
150	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000

151	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	10,000	10,000
152	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	2,000	2,000
153	Խլարարի ներդիրի փոխարինում	10,000	10,000
154	Խլարարի կախոցի փոխարինում	10,000	10,000
155	Կալունակի փոխարինում	50,000	50,000
156	Ռեզոնատորի փոխարինում	25,000	25,000
157	Հովացման հեղուկի փոխարինում	3,000	3,000
5. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
158	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	
159	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	30,000	
160	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	60,000	
161	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	
162	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	
163	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	
164	Կցորդման երկժանիի փոխարինում	5,000	
165	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	300,000	
166	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	40,000	
167	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	20,000	
168	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	40,000	
169	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	33,000	
170	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	60,000	60,000
171	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	30,000	
172	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	30,000	
173	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	30,000	
174	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	30,000	
175	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	30,000	
176	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	40,000	
177	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	40,000	
178	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	50,000	
179	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում	25,000	
180	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	15,000	
181	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	15,000	
182	ՓՏ-ի յուղի փոխարինում	3,000	
183	Վազբաշափի շարժաբերի փոխարինում	10,000	10,000
184	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	600,000	600,000
185	ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում		
186	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	40,000	40,000
187	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	40,000
188	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	40,000	40,000
189	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալունակի փոխարինում	40,000	40,000
190	ԱՓՏ-ի սոլենոիդների փոխարինում	40,000	40,000
191	ԱՓՏ-ի համակարգի և սոլենոիդների փոխարինում	120,000	120,000
192	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	50,000	50,000
193	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկերի փոխարինում	15,000	15,000
194	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	10,000	10,000
195	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	25,000	25,000
196	ԱՓՏ-ի հիդրոագուցի փոխարինում	30,000	30,000
197	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	20,000	20,000
198	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	10,000	10,000

199	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում քարտերի հանում և տեղադրումով	10,000	10,000
6. Կախոց			
202	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	60,000	60,000
203	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	30,000	30,000
204	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
205	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
206	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	20,000	20,000
207	Անվակունդի գամաստեղի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)	20,000	20,000
208	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկների փոխարինում	5,000	5,000
209	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	20,000	20,000
210	Առջևի զսպանակի փոխարինում	12,000	12,000
211	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000	6,000
212	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	14,000	14,000
213	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	15,000	15,000
214	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	10,000	10,000
215	Անիվների պաշտպանիչի փոխարինում	2,000	2,000
216	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	1,000	1,000
217	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000	1,000
218	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	15,000	15,000
219	Վերևի լծակի հեղուսի փոխարինում	10,000	10,000
220	Գնդե հողակապի պատյանի փոխարինում	2,000	2,000
221	Գնդե հողակապի փոխարինում	4,000	4,000
222	Գնդե հողակապի նորոգում	15,000	15,000
223	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
224	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5,000	5,000
225	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	10,000	10,000
226	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	1,000	1,000
227	Հետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	8,000	8,000
228	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	6,000	6,000
229	Հետևի կայունարարի կալունակի փոխարինում	8,000	8,000
230	Հետևի զսպանակների փոխարինում	1,000	1,000
231	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
232	Հետևի անկունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
